

ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի Տոհմիկ Օր Զօնուած 20-րդ դարու Հայ Ազգի Հերոսամարտերուն



Ձեռնարկներ կան, որոնք իրենց բովանդակալից ընթացքով ոչ միայն հրճուանքով եւ ուրախութեամբ կը պատեն մեզ, այլ նաեւ կը ջերմացնեն եւ կը հարստացնեն մեր ներաշխարհը, յիշատակելի ապրումներով կը թափանցեն մեր հոգիներէն ներս եւ անմոռանալի հետք մը կը ձգեն մեր սրտերուն մէջ: Այդպիսին էր ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի կազմակերպած Տոհմիկ Օրուայ 23-րդ ձեռնարկը, ձօնուած 20-րդ դարու Հայ Ազգի Հերոսամարտերուն:

Շաբաթ, Դեկտեմբեր 3, 2016, երեկոյեան ժամը 7-ին Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահը լեցուն էր շուրջ 320 ազգայիններով, որոնք եկած էին միասնաբար տօնախմբելու 20-րդ դարու Հայ Ազգի Հերոսամարտերուն նուիրուած 23-րդ Տոհմիկ Օրը:

Սրահի մուտքը պատշաճօրէն զարդարուած էր օրուայ խորհուրդը իմաստաւորող կամարաձեւ եռագոյնով, Արեւմտահայաստանի քարտէսով, ուր ներառուած էին

ընդհանուր քաղաքներն ու գիւղերը, ինչպէս նաեւ մշտադալար ծառով մը զարդարուած մեր հերոսներու նկարներով:

Երբ սրահի դռները բացուեցան, հիւրերը դիմաւորուեցան ազգային տարազներով ընկերուիիներու եւ պարմանուիիներու կողմէ, որոնք հրամցուցին կեռասի խմիչք եւ չիրով տուրմ, բերուած Հայաստանէն: Մուտքին զետեղուած էին խորհրդանշական Սարտարապատի Հուշահամալիրի 2 արծիւները, սրահի պատերուն տեղադրուած էին հերոսներու լայնածաւալ նկարներ եւ լոգունգներ, որոնք սիրայօժար պատրաստած էր Զոհրապ Թաթիկեան: Սեղաններու կեղրոնը զարդարուած էր Հայաստանէն բերուած, փայտով պատրաստուած արծուանման Արարատ լեռով եւ Հայաստանի Հանրապետութեան զինանշանով, իսկ սրահի ծայրամասի անկիւնը զեղեցկօրէն զետեղուած էր Սարտարապատի յուշարձանը իր զանգակներով, որ պատրաստած էր Ալպէր Պարսումեան: Սարտարապատի կողքին զետեղուած էին 2 Սարտարապատի Հուշահամալիրի արծիւները, բեմի պաստառին վրայ տեղաւորուած էր հետեւեալ լոգունգը «Փառք մեր հերոսներուն, Փառք մեր հերոսամարտերուն» իսկ բեմի կողքին Գանատայի դրօշակը, Եռագոյնը, Արցախի եւ ՀՕՄ-ի դրօշները:

Այս տարի եւս պատրաստուած էր բովանդակալից գիրք մը նուիրուած՝ **20-րդ դարու Հայ Ազգի Հերոսամարտերուն:** Երկար ամիսներու պրպտումներու եւ անխոնջ աշխատանքի արդիւնք այս գիրքէն օրինակ մը տրուեցաւ իւրաքանչիւր ընտանիքի, եւ օրինակ մը յանձնուեցաւ նաեւ նուիրատուներուն: Գիրքը ամբողջացուած է 276 պատկերազարդ, գունաւոր եւ սեւ ճերմակ էջերով, որու կողքի էջին հովանաւորն է Տէր եւ Տիկ. Վարուժ եւ Սիլվիա Լափոյեան: Գիրքի բովանդակութիւնը կ'ընդգրկէ 20-րդ դարու Հայ Ազգի Հերոսամարտերու՝ Վանի, Տարօնի, Ուրֆայի, Շապին Գարահիսարի, Զէյթունի, Հաճընի, Այնթապի, Մուսա Լերան, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի, Սարտարապատի եւ Արցախի մասին պատմական իրողութիւններ, այսպէս հարստացնելով մեր գիտելիքներու եւ տեղեկութիւններու պաշարը: Գիրքին մէջ տեղ տրուած է նաեւ անգլերէն լեզուով ամփոփ տեղեկագրութիւններու: Պաշտօնական գիր ուղարկած էին Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազոր Դեսպան Արմէն Եգանեան, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի **ԼՂՀ** Մշտական Ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյան, Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Զարեան, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի, Հայր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան, Հոգեւոր Հովիւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ,

Թորոնթոյի ՀՅԴ «Ս. Թէլիքեան» Կոմիտէն, Սարտարապատի եւ Մուսա Լերան Հուշահամիլիոններու Թանգարանի Տնօրէն Կարէն Արիստակէսյան, ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութիւնը եւ Տոհմիկ Օրուայ Յանձնախումբը: Շնորհաւորելի են գիրքը պատրաստող ընկեր-ընկերուհիները. վարձքերնիդ կատար:

Ձեռնարկը մեկնարկեց Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտներու դրօշներու մուտքով, որու յաջորդեց Արմենիա Սարգիսեանի Գանատայի, Հայաստանի եւ Արցախի քայլերգներու կատարումը: Տոհմիկ Օրուայ յանձնախումբի Համա-Ատենապետուհի, ընկերուհի Ջեփիլո Տորնա բարի գալուստի ջերմ խօսքերով կատարեց իր բացման խօսքը, որմէ ետք ան անցաւ օրուան նուիրուած նպատակին վերաբերող կարգ մը մանրամասնութիւններուն, հետեւեալ մեկնաբանութիւններով.- “Հայ ազգը Արեւմտեան Հայաստանի մէջ դարեր շարունակ ապրեցաւ Օսմանեան տիրապետութեան տակ եւ ենթարկուեցաւ Օսմանեան պետութեան եւ ժողովուրդին անարդար եւ վարկաբեկիչ վերաբերմունքին, որ իր գազաթնակէտին հասաւ պետութեան կողմէ ծրագրուած եւ իրագործուած հայաջինջ Յեղասպանութեամբ: Յեղասպանութիւն մը որ ոչ միայն սպաննեց 1 ու կէս միլիոն հայութիւն այլ նաեւ արմատախիլ ըրաւ իր պապենական հողերուն կառչած ժողովուրդը եւ փճացուց իր մշակութային եւ մտաւոր ժառանգութեան մեծ մասը:

Սակայն, Հայու ազատատենչ ոգին ընդվզեցաւ այս դրութեան դէմ եւ քաջարի ու պատուախնդիր հայեր ինքնապաշտպանութեան դիմեցին ու հերոսամարտեր մղեցին թուրք բանակին եւ անոր ընկերացող վայրագ ամբոխներու դէմ: Մարտիկներուն հետ նաեւ հայ կինը, մահն աչք առնելով օգնութեան փութաց, պատնէշներ շինեց, խրամատներ փորեց եւ ոմանք նաեւ զէնք վերցուցին իրենց ամուսիններուն հետ:

Հայոց Պատմութեան ամենէն փայլուն էջերէն մէկը արձանագրուեցաւ այս հերոսամարտերու արդիւնքով փո՛քր, սակայն Անկա՛խ Հայաստանի ստեղծմամբ:

Արցախի հերոսամարտը փայլուն էջ մը եւս աւելցուց Հայոց Պատմութեան մէջ...

Փառք մեր դէկավար հերոսներուն, որոնք հասարակ մահկանացուներէ աւելի բարձր մտածելու, ծրագրելու եւ գործադրելու բացառիկ յատկութիւն ցոյց տուին եւ վճռականութեամբ կազմակերպեցին հերոսամարտերը եւ առաջնորդեցին հայ մարտիկները: Թող բոլո՛ր նահատակ հերոսները ներշնչման աղբիւր դառնան մեր նորահաս սերունդներուն, գոյատեւելու իբրեւ հա՛յ եւ պահպանելո՛ւ մեր երիտասարդ հայրենիքն ու Արցախը:»

Անմիջապես յետոյ բեմ հրաւիրուեցաւ Տօքթ. Մարտիկ Աբրահամեանը որով յանձնուեցաւ իր մեծ հօր, խմբապետ Մարտիրոս Աբրահամեանի անձնական յուշերուն նուիրուած գիրքը «Իմ Յիշելի Յուշերը» խորագրով: Գիրքը լոյս տեսաւ հայրենիքի մէջ 2016-ին: Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտները երգեցին «Յառաջ Նահատակ»-ը եւ ներկաները խանդավառութեամբ ընկերակցեցան սոյն երգին:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Գերշ. Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանը եւ նախքան սեղաններու օրհնութիւնը ան իր հայրական պատգամը փոխանցեց, ըսելով թէ 20-րդ դարու հերոսամարտերը դրսեւորումն են մեր ժողովուրդի Հայկեան կամքին, Լուսաւորչեան հաւատքին ու ազատատենչ ոգիին եւ ապա բարձր գնահատեց ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութեան գործունէութիւնն ու Տոհմիկ Օրուան յանձնախումբի կատարած անխոնջ աշխատանքը: Ապա ան կատարեց հերիսայի եւ հայկական ոճով պատրաստուած աղանդերներով ճոխ սեղաններու օրհնութիւնը, ուր հրամցուեցան, ձեռով փաթոյթ (սարմա), ապուխտ, քամուած մածուն, ճակնդեղով աղցան, պանիր, լոլիկ, վարունգ, անանուխ, ձիթապտուղ, թթուաշ, միջուկով քեօֆդէ, պանիրով պէօրէկ. յետոյ հրամցուեցաւ հերիսա, աղցան, միսով եւ նուշով փիլաւ, տաւարի կարմրցուած միս. գաթա/նազուկ, ընկոյզով թելիլիս (քիւնըֆէ), չիր եւ թարմ պտուղ: Ճաշերը պատրաստուած էին յանձնախումբի ընկերուհիներու կողմէ: Ներկայ էին նաեւ Հայր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան, Թորոնթոյի Հայց. Առքլ. Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ, եւ Հալէպէն հիւրաբար քաղաքս գտնուող ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան Սուրիոյ ներկայացուցիչ ընկի. Աննա Տէր Յակոբեանը:

Այս միջոցին սկսաւ գեղարուեստական բաժինը որ համադրած էր Թամար Տօնապետեան-Գուգուեան, «Հերոսապատում» թեմայով: Ան մասնակցեցաւ ասմունքներով, մէջ ընդ մէջ ազգային երգերով իր մասնակցութիւնը բերաւ ազգային երգերու մեկնաբան Նվեր Ղազարեան, «Արշալոյսը նորէն բացուեց», «Վիրաւոր ֆետայու երգը» եւ «Վաղ թէ ուշ» երգերով: «Արեւ ելաւ գէյթունցիներ» եւ Զարթիր լաօ» երգերով իր մասնակցութիւնը բերաւ ազգային ազատագրական երգերու մեկնաբան Մհեր Մինասեանը: Համազգայինի Գլխաւոր Մասնաճիւղի «Էրէբունի» Պարախումբը եւ Պարարուեստի Ուսումնարանի անդամները յայտագրին մաս կազմեցին 3 պարերով «Կակաչներու պար» «Եարիւնջտա» եւ «Արտաշատ»:

Ձեռնարկի ընթացքին Հերոսամարտերու հովանաւորները գնահատուեցան գնահատագրերով որ սիրայօժար շրջանակած էին Տէր եւ Տիկ. Վահէ եւ Վիվիան Ղազարեաններ:

Վան, Այնթապ, Շապին Գարահիսար, Ղարաքիլիսէ, Արցախ, Զէյթուն, Տարօն, Շապին Գարահիսար, Բաշ Ապարան, Սարտարապատ, Ուրֆա, Մուսա Լեռ եւ Հաճընի հերոսամարտերու հովանաւորներն էին Տէր եւ Տիկ. Հէնրի եւ Հանրիէթ Ապրահամեան, Տօքթ. Բէյմօնտ եւ Տիկ. Էլիզապէթ Գէորգ, Տիկ. Արշօ Զաքարեան, Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Սալբի Թոքաթլեան, Տէր եւ Տիկ. Վահէ եւ Հոնիփ Թոքմաքճեան, Տօքթ. Ժիրայր եւ Տիկ. Էգի Թոնամեան, Պր. Մայքըլ Ժովի եւ Տիկ. Անի Հոթոյեան-Ժովի, Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Մարալ Հասըրճեան, Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Անի Հասըրճեան, Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Հուրի Նաճարեան, Տէր եւ Տիկ. Վահան եւ Լուսին Շահինեան, Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Սեդա Պալեան, Տիկ. Ռիթա Պէքմէզեան Շամլեան, Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Սոնա Ֆատրգճեան:

Այս միջոցին ցուցադրուեցաւ նաեւ պատկերիզ մը Արեւմտահայաստանի մասին: Պատկերիզը որ բերուած էր Հայաստան Երկիր Միտիա Հերուստակայանէն, եւ համադրուած Օննիկ Նազարեանի կողմէ, կը ներկայացնէր մեր հերոսամարտերու պատմականը: Հոռովել նուագախումբը դեկավարութեամբ՝ Ճիվան Ստեփանեանի, իր մասնակցութիւնը բերաւ սքանչելի տոհմիկ եղանակներով եւ երգերով որոնք մեծ խանդավառութեամբ ընկերակցեցան երգչուհի Արմենիա Սարգիսեան եւ ազգային ազատագրական երգերու մեկնաբան Միքայիլ Մինասեան:

Օննիկ Նազարեան յանձնառուն էր հեռուստատեսիլի նկարահանման, Յակոբ Գուգուեան յանձնառուն էր նկարահանման:

Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն եւ լոռ աճուրդ. նուէրները ընդհանրապէս ունէին ազգային բնոյթ: Վիճակահանութեան տոմսակներուն կցուած էին էջադիրներ որոնք գեղեցկօրէն պատրաստուած էին օրուայ խորհրդանիշը ներկայացնող նկարներով եւ լոգունգներով: Ձեռնարկ-խրախճանքը շարունակուեցաւ խանդավառ մթնոլորտի մէջ, Հոռովել նուագախումբի ազգային եւ տոհմիկ երգերու մատուցումով:

Այս ձեռնարկի հասոյթը պիտի յատկացուի ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի կրթական, երիտասարդական, ընկերային եւ հայրենիքի օժանդակութեան ծրագիրներուն:

Տոհմիկ Օրուայ խրախճանքը բարձր տրամադրութեան մէջ պահեց ներկաները՝ եւ վստահաբար այս երեկոն երկար ժամանակ իրենց յիշողութեան մէջ թարմ պիտի մնայ: Ձեռնարկ մը որ ոչ միայն յաջողեցաւ այլ գերազանցեց:

«Փառք մեր հերոսներուն. Փառք մեր հերոսամարտերուն»

Սոնիա Գրաճեան